Ը. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 19.. ԹԻՒ 761

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 »
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

—o—

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Դրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՌՈՒՍ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐՐԸ

Ցարի ազատական մանիֆէստը դեռ խաղաղութիւնը չը վերահաստատեց Ռուսիայում. Մանիֆէստից դժգոհ են ռուս ժողովրդի երկու ծայրայեղ մտածող տարրերը՝ յեղափոխականները ու պահպանողականները. Առաջինները այն պատճառով որ մանիֆէստը որոշ և յստակ կերպով չէ յայտարարում թէ կայսրը հրաժարվում է իր ինքնակալական իրաւունքներից և կառավարութիւնը վերածվում Սահմանադրականի, այլ գործածված ընդհանուր խօսքերից միայն գուշակվում է այդ. Յեղափոխականները վարանման մէջ են, դեռ բոլորովին զինադադար չեն եղած ու հաւանական է որ չը լինեն էլ մինչեւ որ տեսնեն թէ հաւաքվող Դուման ինչ արդիւնքներ պէտք է տայ. Ցարի մանիֆէստում ընդհանուր մտքով գործածված ազատական խօսքերը ինչ չափով պէտք է գործի վերածվին...

Ինչպէս ասացինք դժգոհ են և պահպանողականները այսինքն միապետականները. հին, աւերիչ արիւնարբու ռէժիմի պաշտպանները. Սրանք բոլորովին հակառակ են Ցարի արած զիջողութիւններին ու մեծ տրամադրութիւն ունեն պահպանել ինքնակալական դրութիւնը. Այս տարրը բաւական զօրաւոր է, իրեն պարագլուխներ ունի կոմս Շէրէմէթեւ, կոմս Իգնատեւ և իշխան Շչերբատով՝ ազդեցիկ միապետականներ, որոնք արդէն սկսել են միջոցներ ձեռք առնելու Վիտէին տապալելու և հակայեղափոխութիւն (կոնտր րէվոլիւցիոն) առեղծելու համար. Մի քանի քաղաքներում արդէն յաջողել են յեղափոխականների և ազատականների ցոյցերին հակառակ ցոյցեր սարքել, նոյնիսկ յարձակումներ են գործել. Սրանց կատաղութեան զոհերն են ի հարկէ ռուս ուսանողները, գործաւորները և ազատամիտ ինտէլիգէնցիան, որոնք ռուս յեղափոխութեան կազմակերպողները և վարիչներն են հանդիսանում. Այնպէս որ այս իրողութիւնների առջեւ մարդ ստիպվում է մտածել թէ Ռուսիայում ներքին քաղաքական պատերազմը, շնորհիւ պահպանողականների լրբութեան դեռ պէտք է յարատեւէ, եթէ Վիտէ որոշապէս ազատական տարրի ծրագրին չը հետեւելով չը կազմէ մի զօրեղ կառավարութիւն առանց որ և է տատանումի այդ ծրագիրը գործադրելու համար.

Վիտէն շատ ճիշդ է ասել թէ «Պորտսմուտի հաշտութեան գործը աւելի դիւրին էր քան ներկայումս յանձն առածը». այս խոստովանութիւնը յստակօրէն ցոյց է տալիս որ Վիտէ որոշապէս ըմբռնում է իր կացութեան դժուարութիւնը. այդ ըմբռնելուց յետոյ նա պէտք է և ընդունակութիւնը ունենայ իր առջեւ ցցված դժուարութիւններին դիմագրաւելու և յաղթելու համար... ապագան պէտք է ցոյց տայ թէ Վիտէ պէ՞տք է հանդիսանա՞յ ժամանակի իրական պետական մարդը.

Վիտէի դրութիւնը դժուարանում է և մի այլ պատճառով. Նրա մինչեւ օրս բռնած կիսաազատական, կիսամիապետական դիրքը իրեն կասկածելի է դարձնում ազատականների մեծամասնութեան աչքում. ազատականները վախենում են որ նա կէս ճանապարհին կանգ առնի և ձգտի իրականութեան մէջ Ցարի զիջումները մինիմումի հասցնել.

Ուրեմն Վիտէին մնում է որոշ լինել. կամ բոլորովին անցնել ազատականների կողմը և կամ թէ ասպարէզից հեռանալ, եթէ իրօք տրամադիր է երկդիմի քաղաքականութեան հետեւել. Հակառակ պարագային ոչ միայն խաղաղութիւնը չի հաստատվի երկրում, ընդհակառակը պայթումները աւելի ուժգին պէտք է լինեն. որովհետեւ յայտնի է թէ Ցարը տատանվող մարդ է. յեղափոխական շարժումները մի քիչ մեղմանալուց յետոյ նրան պէտք է համոզեն ետ առնել իր արած զիջումները, որոնք տեղի են ունեցել բորբոքված յեղափոխութեան ուժի առջեւ և օգտվելով նրա մարած վիճակից, վերահաստատել նախկին միապետական դրութիւնը. այդ պարագայում ի հարկէ յեղափոխականները պիտի կրկին ոտքի կանգնեն, պայքարը պէտք է սաստկանայ կոնտր ռէվօլիւցիոներները պէտք է աշխատեն խեղդել յեղափոխութիւնը վերջնապէս, ու ահա այդ միջոցին է որ Ռուսիան պիտի հեղհեղվի արեան գետերով.

Այո, Ռուսիան քաղաքական ներքին վտանգներից ու կատաստրոֆներից դեռ բոլորովին ազատված չէ և ռուս յեղափոխականների ուժից ու Վիտէի բռնելիք դիրքից, ճարպիկութիւնից և ընդունակութիւններից է կախված այդ վտանգների չեզոքացումը.

ՎԱՐԴՕ

ԱՐԻՒՆ՝ ԱՐԻՒՆ ԵՒ ՀԵԾԵԾԱՆՔ

Նստած եմ աշխատութեանս սեղանի առջեւ. զանազան լեզուներով թերթեր, որոնք արդէն կարդացել եմ, անխնամօրէն թափված են առջեւումս. Նրանցում աշխարհի բոլոր ծայրերից կան տեղեկութիւններ, մարդկային բոլոր ցեղերի կեանքից դէպքեր, պատկերներ, Ընթերցումից ուղեղս յոգնել է. ստացած տպաւորութիւնից ջղերս ընդարմացել են. Երեւակայութիւնս բորբոքվել է սարսափելի տեսարաններից. Գիշեր է. փոթորիկը մռնչում է եւ դղրդացնում սենեակիս պատուհանները, նրա թեթեւ ընդհատման միջոցին ծովի գոռում գոչումը բազմաթիւ որոտումների արձագանքի նման ներս է սողում սենեակիս մէջ ու միանալով գլխումս մեխված մարդկային սարսափելի հառաչանքների հետ զարհուրեցնում ինձ. Այո, զարհուրելի են մարդկային արեան հեղումի այդ տեսարանները որոց նկարագրութիւնը տուին ինձ առջեւս թափված թերթերը. Նրանց բոլոր էջերը լիքն են արեան գազանաբար հեղման պատմութիւններով, աշխարհի ամեն ծայրերում, մարդկային բոլոր ցեղերի մէջ.

Ռուսը վազեցնում է ռուսի, հայի, հրեայի, թաթարի արիւնը. թաթարը, թուրքը հայի, ռուսի. հայը թաթարի թուրքի, ռուսի. յոյնը, սերբը, թուրքը բուլգարի արիւնը, բուլգարը դրանց արիւնը... այդ բաւ չէ գերմանացի, Ֆրանսացի, անգլիացի պատրաստվում են իրարու արիւն վազեցնել... որքան աւելի խոշոր, հսկայական արիւնոտ պատկերներ են ներկայանում մարդկային կեանքի հեռաւոր հորիզոնում...

Արիւն անցեալում, արիւն ներկայում եւ արիւն ապագայում. ու դըրա ընկերակից մորթվող մարդկութեան սրտակտուր հեծեծանքի այս արձագանքները զարհուրեցնում են ինձ...

Արիւնը բաւ չէ գազանացած մարդի համար. Նրա գոյնը կորցրել է իր հրապոյրը. Մարդը գոհ չէ միայն մարդին ոչնչացնելով, այլ աւելի փայլուն կերպով ոչնչացնել է ուզում մարդին իր աշխատութեան արդիւնքների հետ միասին. եւ նա հրդեհում է տուն, խրճիթ, պալատ, գործարան, խանութ, տէրերին իրենց սեփականութեան հետ ողջ ողջ այրելով, հրճուած դիտելով ոսկեփայլ բոցերը, լսելով այրվողների աղէկտուր ճիչերը, դիտելով մարդկային իւղի ճենճի հետ դէպի երկինք բարձրացող ծուխը. Ռուսիոյ բոլոր քաղաքներում, Հայաստան, Մակեդոնիա, այս զարհուրելի տեսարանների հանդիսավայրն է... Գազանացած մարդի ձեռքով ստեղծված դժոխային պատկերները թագաւորում ամէն տեղ, ամէն ուրեք, բնութիւնը անգամ որ աւերելու գերազանց յատկութիւններ ունի, շուարում է գազանացած մարդի այդ կործանիչ ընդունակութեան վրա.

Աշխարհը գազան մարդի ձեռքով վերածվել է արեան, հեծեծանքի, ծուխի, մարդկային ճենճի միաձոյլ զանգուածի...

Ու մարդ սարսափում է.. որովհետեւ բանականութիւնը, խիղճը դէմ են այս բոլորին — բայց արգիլել, դադրեցնել անկարող են գազանութեան վերջ տալու համար պէտք է գազանութիւն գործ դնել... եւ ահա վըտանգաւորը մարդի մէջ. բաւական է որ նա մտած է գազանական հոգե-

կան կացութեան մէջ, այլեւս կանգ առնել դժուարին է. բռնակալը գաղան է. եւ նրա դէմ ըմբոստացողը պարտաւորւում է գազանանալ, կատարել այն ինչ որ նրա համար քստմնելի ոճիր էր եւ է նոյնիսկ իր գործադրած միջոցին։

Ու այս մարդկային երկուութեանը սարսափելի կացութիւնը մինչեւ ե՞րբ պէտք է տեւէ. արդեօք մինչեւ յաւիտեան, քանի մարդը գոյութիւն ունի՞...

Ըստ աւանդութեան առաջին եղբայրասպանը մարդկութեան մէջ ահռելի սարսափ զգաց առաջին անգամ հեղված մարդկային արեան. բայց այդ սարսափը ինչպէս երեւում է եղբայրասպանութիւնը դադրեցնելու չարժառիթ չեղաւ. ընդհակառակը մարդկութիւնը եղբայրասպանութեան մէջ աւելի յառաջադիմեց քան ոև է ուրիշ բանի մէջ.....

Բայց յուսանք, հաւատանք որ ժամանակը, մարդկային մտքի զարգացումը, հոգեկան ձգտումների ազնուացումը պէտք է վերջ տան մարդու գազանային ձգտումներին, երբ ընկերութիւնը, ընկերական կազմակերպութիւնը կը հիմ֊վի այնպիսի սկզբունքների վրա, որոնք ծառայելու են մարդկանց իրարու հետ ունեցած ընդհարումների դրդապատճառները վերացնելուն։

Յուսանք և հաւատանք որ վերջապէս մի օր պէտք է մարդը դադարի գազան լինելուց. հակառակ պարագային չարժէր մարդ ստեղծվել և ապրել։

Վ.

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆՔ ՅԱՋՈՂՈՒՄ

Լուրեր են պտտում որ Վառնայի ազգային դպրոցների նիւթական վիճակը այս տարի, ինչպէս և ամեն տարի աննախանձելի դրութեան մէջ է. Հոգաբարձութիւնը յոյս չունի որ կարենայ ուսուցիչների վարձերը կանոնաւորապէս վճարէ։ Սա իհարկէ նորութիւն չէ Վառնայի համար և հաւանական է որ միշտ շարունակէ հնութիւն մնալ եթէ Վառնացիները չը մտածեն արմատական միջոցներով դրա առջեւը առնել։

Դպրոցական այս անտանելի և յառաջադիմութեան համար վնասակար կացութեան գլխաւոր պատճառը այն է որ դպրոցական վարչութիւնից բացարձակօրէն հեռու են մնում այն ուժերը որոնք իրենց դիրքով, հեղինակութեամբ կապերով կարող էին մեծ օգուտներ բերել դպրոցներին։

Ճիշտ է Հոգաբարձութիւնները կամ Թաղականութիւնները տարին մէկ-երկու անգամ դիմում են այդ դուրս մնացած ուժերին օգնելու իրենց. բայց այդ ունենում է միայն թռուցիկ բնոյթ. այսինքն այն մարդիկ որոնք ուղղակի իշխանութիւն ունենալով ազգային դպրոցների վարչութեան մէջ կարող էին շարունակ օգտակար հանդիսանալ, տարին մի երկու անգամ կամ թատրոնի տոմսակ են ծախում և կամ ի նպաստ եկեղեցւոյ և դպրոցների, ու յաճախ ոչ այնքան մեծ հաճոյքով որ և շատ բնական է, որովհետեւ իրենք անմիջական հսկողութիւն չունին գիտակցելու համար թէ հաւաքված դրամները և իրենց աջակցութիւնը իրօք որչափ նպաստաւոր են դառնում դպրոցների համար........

Այդ դուրսը մնացած ուժերը, առանց որոնց օգնութեանը ոչ մի Հոգաբարձութիւն կարող է միակ իր ջանքերով դպրոցի նիւթականը մատակարարել, մի տեսակ ժամանակաւոր, թէև պատուաւոր ծառաների դեր են կատարում, տարին մի անգամ Հոգաբարձուների կամ թաղականների համար դրամ հաւաքելով. մի վիճակ որը իր ամեն մի քայլի գիտակցութիւնը ունեցող մարդի համար այնքան էլ հաճելի չէ. և հէնց գլխաւոր պատճառը այդ է որ դրսի ուժերը Հոգաբարձութեանց և կամ թաղականութեանց դիմումներին, դրամ հաւաքելու կամ տոմսակ ծախելու համար, այնքան էլ հաճոյքով դրական պատասխան չեն տալիս։

Եւ իրօք այնքան էլ հաճելի կացութիւն չէ խելքը գլխին մարդի համար միշտ դրամ հաւաքել եկեղեցու և դպրոցի համար և չիմանալ թէ այդ գումարները որչափ նպատակայարմար կերպով են մատակարարվում խնդրի նիւթ ազգային հաստատութիւններին։

Այս անորմալ կացութեան միակ պատճառը այն է որ Հոգաբարձու ընտրվելու իրաւունք ունին միայն բուլղարահպատակ հայերը մինչդեռ ոչ հպատակների շարքերում են գտնվում այն կարող ուժերի մեծամասնութիւնը, որոնք բուլղարահպատակ չեն։

Իհարկէ երկրի օրէնքին հակառակ չէ կարելի գնալ. այսինքն չէ կարելի ոչ հպատակներին Հոգաբարձու ընտրել. Բայց օրինաւոր հոգաբարձութիւնը եթէ ուզենար կարող էր դուրս մնացած ոչ հպատակ ուժերից առանց որոց աջակցութեան նա երբեք չէ կարողացել ու չէ էլ կարող դպրոցական խեւմուտքը, բարոյական ու մտաւոր վիճակը կանոնաւորել, իրեն աջակիցներ հրաւիրել, որոնք գոնէ հայ հասարակութեան առջեւ բուն հոգաբարձուների չափ իրաւունք և ձայն ունենային դպրոցական գործերը վարելու մէջ.

Վառնայի ներկայ կացութեան մէջ էր և Ռուսճուքը տարիներ առաջ. սակայն այնտեղ մտածեցին մեր մատնանշած ձեւով վարել գործերը և մի շարք տարիների ընթացքում կատարեալ յաջողութիւն ունեցան և գործնականապէս ապացուցին որ Բուլղարիայի քաղաքներում գտնվող հայ դպրոցները միայն այդ կերպով կարելի է վարել նպաստաւոր արդիւնքներ ստանալու համար։

Ժամանա՛կ է վերջապէս ըմբռնելու որ մեր դպրոցներին կարող են միայն թէ մտքով եւ թէ դիրքով ազդեցիկ մարդիկ օգտակար հանդիսանալ. իսկ այդ տեսակ մարդիկ երբէք չեն համաձայնի եռանդով նպաստել հանրային հաստատութիւններին որոց մատակարարման ուղղակի միջամտութիւնից եւ հսկումից հեռու են պահվում եւ խղճի հանդարտութեամբ չեն կարող խոստովանել թէ իրենց ուղղակի կամ ուրիշներից ձեռք բերած նպաստները կանոնաւոր ու արդիւնաւէտ կերպով իրենց նպատակին են ծառայում։

Մենք առաջարկում ենք Հոգաբարձութեան եւ Թաղականութեան լրացեն միացած մի ժողով գումարել եւ որոշում տալ իրենց գործակցելու հրաւիրելու հէնց այն պարոններից մի քանիսին, որոնց տարին մի կամ երկու անգամ դիմում են կամ իւղագին հաւաքելու եւ կամ թէ բալօյի եւ թատրոնի տոմսակներ ծախելու համար, նրանց հաւասար իրաւունքներ տալով իրենց վարչութիւնների մէջ. Թէ չէ իրօք ծիծաղելի դրութիւն է. մարդոց դրամ հաւաքել տալ, բարոյական պարտականութիւններ բարձել մարդկանց վրա եւ միջոց չը տալ ուղղակի կերպով միջամտելու գործերին եւ յետոյ էլ վշտանալ որ նրանք երբեմն մերժում են կամ թէ ոչ այնքան դիւրութեամբ են համաձայնում ազգային իշխանութեան պատուաւոր անգիտակից գործակատարների դերը կատարել.

Վերջապէս պէտք է ըմբռնել եւ այն ճշմարտութիւնը թէ ամենահմուտ և ընդունակ ուսուցիչը իսկ անկարող է դպրոցի մէջ արդիւնաւէտ կերպով աշխատել եթէ նրա նիւթականը որոշ չափով եւ անպայմանօրէն ապահով չէ. Մի ուսուցիչ երբ առաւօտեան զարթնում եւ մտածում է թէ՝ նոյն օրը պէտք է արժանանայ ճաշարանատիրոջ, բախալի, սանտիրոջ կօշկակարի, հանդերձավաճառի եթէ ոչ խօսքով գոնէ ակնարկներով յանդիմանութեան, նա չէ կարող հանգիստ մտքով եւ սրտով մտնել դասարան. ինքզինքը իր պարտատէրերի

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԷՅՖ

24

ԴԷՖԻ

Հայկական Ռոման մը

(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

Գլ. ԺԵ.

«ՈՉ. ԱՍՏՈՒԱ՛Ծ ԱՊՐԻ՛Մ...»

Կրկին ու կրկին նայեցայ այդ կէտին, մինչեւ աչքերս ցաւիլ սկսան, մինչեւ որ ճառագայթները նուաղեցան, մինչեւ որ օրը անցաւ. մինչեւ որ, աւերակները, որոնք զիս այնքան հետաքրքրած էին, տեսողութենէս վրիպեցան. Այո՛, սխալուած չէի, վանք մըն էր այդ. մանկութեանս Միքէլէն լսած աւանդութիւն մը, որ մոռցուած էր, յիշողութեանս մէջ պայծառօրէն արթնցաւ. Այո, մեր պալատին ու այդ վանքին միջեւ կապակցութիւն մը կար—պէտք էր գտնէի.— կրնար կեանքս արժել ինձ։ Ապա, յուսատրոփ սրտով, շարունակեցի քայլերս խարխուլ գաւիթներուն մէջէն եւ փտած գերաններուն վրայէն, մինչեւ որ սենեակս հասայ։ Ի՜նչ փոփոխութիւն եկած էր վրաս։ Այո, պիտի ապրէի՛... որքան կը բաղձայի առաւօտեան։

Բայց և այնպէս, բոլոր յուզումէս և յոյսերէս վերջ երբ յաջորդ առաւօտ արշալոյսին կրկին կը բարձրանայի քայքայուած սանդուխներէն վեր՝ խուզարկութիւնս կատարելու համար, խորհեցայ թէ այս ալ ուրիշ բան մը չը պիտի ըլլար. բայց եթէ յուսախաբութեան նոր հոսանք մը. Այո՛, դա վանքն էր. Ուղղակի զայն տեսած սենեակս գացի, որպէս ատոր տեսութեամբ յոյսերս վերանորոգեմ. Լեռներու կանաչագեղ հովտին մէջ կը հանգչէր ան—առաւօտեան լոյսով ոսկեզօծուած. Այսուամենայնիւ, մեզ համար փրկանք մը չկայ ատկէ, կը խորհէի։ Պէտք էր Միքէին երթալ, տեղեկութիւններ ստանալ ատոր մասին. ան գիտէր ամէն ինչ։ Սոյն որոշումէս վերջ րոպէ մը իսկ չը կորսնցուցի զայն գործադրելու համար։

Հաւատարիմ կինը նստած գտայ՝ ողբալի արտայայտութիւն դէմքին վրայ։ Վերջին երկու ամիսը իւրաքանչիւր ժամ կ'սպասէր իր և իր սիրելիներուն մահուան։ Ամէն օր Արամարանի կացութիւնը կողբօր—իմաստուն, բարի տիրոջ, որ այնքան կը յարգէր։ Շատ յարմար էր գոչել—» զօրաւորները ի՜նչպէս ինկան»։ Խեղճ հայրս խելագար մը դարձած էր Զարմանալի կէտ մը կա՞ր հոդ։ Աշխարհային ամեն նկատումներէ ձեռք քաշած էր ան այլեւս։ Մինչեւ այդ օր խորագէտ գործի մարդ մը եղած էր. իր յարաճուն հարստութիւնն ու գործերը վերահսկելով, զորս դարերու շարքը իրեն բերած էին։ Հիմա ամեն ինչ վերջացած էր։ Այրած էր այլեւս այն քուրձը, որ տասնեօթը տարի շարունակ իբրև սգոյ նշան կնոջ և զաւկըներուն մահուան՝ հագած էր, ու զարդարուած արեւելեան միապետի մը բոլոր մեծափարթամ պերճանքով Այս հանդերձանքով զգեստաւորուած, օրէ օր, յաճախ մինչեւ մթնկոխ դուրսը մնալով՝ իր վճռական օրհասին կսպասէր։ Որքա՛ն ես կեանքի, նո՛յնչափ ալ մահուան համար այնքա՛ն անձկագին ու մեծափափաք կը տենչար ու կաղօթէր։ Աւա՜ղ, խե՜ղճ հայր իմ...

Միքէին դէմքին վրայ անջնջելիօրէն դրոշմուած վիշտն ու տառապանքը ցաւալի էր տեսնել ու սենեակէն ներս մտած պահուս՝ անհամբեր հետաքրքրութիւն մը պաշարեց հոգիս։ Թեւերս պարանոցին շուրջը նետեցի։

—Այդպէս մի՛ տխրիր. Միքէս թերեւս չը պիտի սեռնինք, գոչեցի, գտա՛յ զայն։

Միքէն չը հասկցաւ և ի՞նչպէս կրնար։

—Գտա՛ր զայն,—ի՞նչ գտար, Դէֆիս։

Ո. քո՛ն անմիտ է էն, կը խորհէի։ Ի՞նչ մեռնելու պէտք չկայ, վանքը գտայ։

—Վա՛նքը... վա՛նքը կրկնեց եւ տեւելով, իւրաքանչիւր բառէն վերջ դէմքը գունատուելով։

Երկար չէի կրնար դիմանալ ատոր. Միքէին մանկութեանս պատմած աւանդութեան բոլորովին վստահ, վերջին աստիճան անհամբեր էի։

—Այո՛. Միքէ, գոչեցի. վանքը... վանքը կը յիշե՞ս... Գրգռումս աւելի յառաջ տարաւ զիս։ Ուսերէն բռնելով՝ վայրագօրէն գոչեցի.—Օ՛ Միքէ, վանքը...

Սարսափահար նայուածքով մը աճապարանքով ոտքի ելաւ։

—Աստուա՛ծ իմ, բացականչեց. Դէֆիս ալ խեղճ տիրոջ՝ Արամարանին նման է։

Ապա, գետինը իյնալով՝ անզուսպ լաց մը սկսաւ։

Ինչ ընելս չէի գիտեր։ Դառնօրէն աւաղեցի այն վայրենի կրքիս վրայ, որով խեղճ Միքէ/ս թոյլ ջիղերը գրգռած էի։ Ու հիմա տեղեկութեան ամէն յոյս անցած էր։ Ցնցաւոր էի։ Շոյանքներուս ներքեւ բորբոքումը

առջեւ բարոյապէս ստորնացած ընդունող ուսուցիչը չէ կարող բարոյական կերպով զարգացնել իր աշակերտների մէջ։ Եւ Վարնայի ու սուցչին այդ ստորնացուցիչ եւ դրպրոցի համար վնասակար կացութենից հանելու համար հարկաւոր է դրպրոցների ելեւմուտքը կանոնաւորել. ու կրկնում ենք այդ նպատակին, եթէ ոչ ամբողջովին գոնէ մասամբ կարելի է հասնել մեր մատնանշած ձեւով։

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՖԻՆԼԱՆՏԻՈՅ ՄԷՋ

Ռուսական յեղափոխութիւնը ապարդիւն չանցաւ Ֆինլանտիոյ համար. այդ փոքրիկ երկիրը որ առանց աղմուկի կը դիմադրէր ռուս միապետական ռէժիմին զինենք ռուսացման ոտնձգութիւններու դէմ, օգտուելով միապետութեան խառնակ կացութենէն իր նախկին դրութիւնը վերստեղծեց կրկին լռութեամբ առանց աղմուկի։

Ահա թէ այս առթիւ ինչ կը կարդանք «Լը Բուր. Եօրոպէէն»ի մէջ.—«Ֆինլանտիոյ կառավարիչը՝ իշխան Օպոլէնսքին և Սենատը, որ Ռուսիոյ ձեռնասուններէն բաղկացած էր, հրապարակաւ, պաշտօնապէս հրաժարած են իրենց պաշտօններէն, Հէլսինգֆորսի բնակչութեան ներկայութեանը. ռուս դրօշակը վերցուեր և քաղաքին բոլոր արձաններուն վրայ ցցուեր են Ֆինլանտական դրօշակները։ Ֆինլանտացիները յեղափոխական շարժումը պիտի շարունակեն, մինչեւ կայսրը ընդունի իրենց քաղաքական ազատութիւնը։ Ազգային ժողովը անմիջապէս պիտի հաւաքուի. յեղափոխութիւնը տեղի ունեցաւ խաղաղօրէն. կարգը պահպանելու համար Ֆինլանտիոյ բոլոր քաղաքներու մէջ ազգային պահակազօրք (միլիցիա) կազմակերպուած է»։

Կը շնորհաւորենք Ֆինլանտացիները որ ճարպիկութիւնը ունեցան առանց մեծ զոհեր տալու իրենց նախկին դրութիւնը վերստանալ. անշուշտ ապագայ ծուման չը պիտի ուզէ միապետական ռէժիմին սխալ ընթացքին հետեւիլ արիւնոտ մի ջոյներ ձեռք առնելով Ֆինլանտիոյ ազատութիւնը կորզելու որ դեռ քանի մը տարի առաջ կը վայելէր և միայն արիւնոտ Բլէվէին արիւնոտ քաղաքականութեան շնորհիւ զրկուեցաւ անկէ։

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Հայերու յոյսը վերջին ժամանակներս աւելի Միացեալ Նահանգներու վրայ դրուած է, որը եթէ անմիջական շահ մը չունենալով Եւրոպայի մէջ և Թուրքիոյ հետ, պիտի կարենար պաշտպանել մեզ թուրք կառավարութեան բարբարոսութեանց դէմ. Բայց այս պարագային ալ անողոք իրականութիւնը կուգայ մեր լաւատեսներուն երազները և յոյսերը օդը ցնդելու։ Ահա թէ ինչ կը հաղորդեն «Լը Բուրէ Եօրոբէէն»ի Պոլսէն նոյեմբեր 22ին.

«Սուլթանը, ուրբաթ օրուան, ամսոյս 20ին, Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ պ. Լէյշմանին բրած ընդունելութեան միջոցին իր շնորհակալութիւնը յայտնած է որ վերջինս խարգման չէ զրկած ինչպէս սովորութիւն է, ամերիկեան հպատակ Վարդանեանի՝ Աբրիկ Ունճեանը սպանողի դատավարութեան ատեն։

Ամերիկահպատակ դարձած հայերը որոնք գործերու պատճառով ստիպուած են Թուրքիա գալ պարտաւորուած պիտի ըլլան քիչ մը խորհիլ իրենց ապագայի մասին, որովհետեւ պ. Լէյշման օգտուելով այդ ընդունելութենէն Սուլթանին յայտնած է որ եթէ Բ. Դուռը համաձայնի պաշտօնապէս ճանչնալ Թուրքիոյ մէջ գտնուած ամերիկեան հաստատութիւնները և ամերիկեան լիազօր դեսպանութեան հաստատումը, Վաշինկթընի դահլիճը պատրաստ է հրաժարիլ պաշտպանելու այն հայերը որոնք առանց Սուլթանի թոյլտուութեան ընդունած են ամերիկեան հպատակութիւնը և Թուրքիա վերադարձած։

Շատ նշանակելի երեւոյթ է ասբոլոր ամերիկեան քաղաքացի հայերը, առանց բացառութեան, առանց Սուլթանի արտօնութեան ընդունած են ամերիկեան հպատակութիւնը»։

Այո, շատ նշանակելի երեւոյթ. ուրեմն հայերուս հանդէպ անշահասէր Միացեալ Նահանգները եւս եւրոպացիներու նման պատրաստ է իր պետութեան աւելի փոքրիկ շահերուն համար, քան եւրոպացիները ունին Թուրքիոյ մէջ, հրաժարիլ մեզ պաշտպանելէ, նոյն իսկ եթէ իր քաղաքացիները դարձած ըլլան։

ՌՈՒՍԻՈՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍ ՅԵՏԱԴԻՄԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՃԻԳԵՐԸ

Ս. Բեթեր. 31 հոկտ.

Յետադիմական կուսակցութիւնը գինաթափ չի ըլլար։ Գաւառային քանի մը քաղաքներէ յետադիմականներուն կազմակերպութեան պատկանող պատգամաւորներ եկած են Ներքին Նախարարներուն հրաժարեցումը պահանջելու և տէքթիմաթորութիւն հաստատել խնդրելու համար։ Կոմս Շէրէմէթև և իշխան Շչերպաթով այս պատգամաւորներուն պարագլուխները են. որոնք մօտ հազար անդամ ունին։

Մոսկուայի մէջ է որ յետադիմականները աւելի մեծ թիւով կուսակիցներ ունին։ Հոն քանի մը տասնեակ հազար համամիտներէ կազմուած կուսակցութիւն ունին։ Այժմ զբաղած են դրամագլուխ սահմելու ժողովրդային մեծ թերթ մը հիմնելու որ միանգամայն թէ Բեթերսպուրկի մէջ և թէ Մոսկվա պիտի լոյս տեսնէ։

Վարշավա, 27 հոկտ.

«Ռուսիա» Սոսիալ դեմոկրատ կուսակցութիւնը, «Վարշաւայի կռուող յեղափոխականներու քոմիթէին» միջամտութեամբ կոչ մը ուղղած է Վարշավայի կռուող բրոլէթարիաներուն։ Այդ կոչին մէջ մասնաւորապէս ուշադրաւը

անցաւ։ Տակաւին թեւերս պարանոցին շուրջը՝ համակրական գորովալիր հայեցող նայուածքով մը երեսս նայեցաւ։

— Ու Դէֆիս, Արամարանին,—իմաստուն տիրոջ նման չէ՞։

— Ափսո՜ս, խեղճ հայրս։ Զարմանալի կէտ մը կը տեսնէ՞ս կեանքի օրհասը վերջապէս գահազրկեց զինքը։ Ափսո՜ս, խե՛ղճ հայրս։ Դիմէ գիտես, Միքէս...

— Այո, և նոյնպէս դուն, Դէֆիս։ Հառաչ մը հանեցի ու մեր աչքերը իրար հանդիպեցան։

Բաւական ատեն այսպէս նստած էինք կարծեմ.—յիրաւի. միօրինակ կեանքիս մէջ ժամանակը շատ քիչ կը նկատուէր, երբ. երազուն եղանակով մը ըսի.—ո՛հ, Միքէս, պատմէ ինծի այն թագաւորին պատմութիւնը, որ մոլեգնած նախանձոտութեան մը մէջ, իր կեանքին չափ սիրած եղբայրը սպաննեց։

— Ափսո՜ս, Դէֆիս, այդ Աշոտն էր։ Աւելի քան հազար տարի առաջ կատարուած դէպք մէ այդ։ Տխո՜ւր, շա՛տ տխուր պատմութիւն մ'է, Դէֆիս հիմա՞ կուզէ լսել։

— Այո՛ Միքէս, տխուր պատմութիւնները կը յարմարին մեր տխուր ժամանակներուն, աւելի մեր տխուր սրտերուն։ Պատմէ՛ Դէֆիիդ կը խնդրեմ։

— Լա՛ւ ուրեմն, աւելի քան հազար տարի առաջ էր Աշոտ բունա խանգարերուն ամենէն հզօր թագաւորը..

— Այս ո՞վ ըսաւ քեզի... Ճի՞շդ է, ըսի իրեն. իր պատմելու եղանակէն ազդուելով որ անշուշտ իրը չէր

— Այո՛, այո՛, շատ ճիշդ է։ Դէֆիիս հրեշտականման մայրը—Արամարանին իշխանուհի հայրը—ափսո՜ս հզօրնելը ինչպէս կ'ըսեն—այս պատմութիւնը տուաւ ինծի որ կարդամ ու ես այնքան սիրեցի, որ կրկին ու կրկին անգամ կարդացի զայն, Դէֆիս։

— Լա՛ւ շարունակէ ըսի։

— Աշոտ շատ զօրեղ թագաւոր մ'էր։ Ան հարուստ, առաքինի ու մեծ էր, բայց իր եղբայրը սպաննեց։

Համբերութիւնս դարձեալ կորսնցնելու վրայ էի։ Այս բոլորը անկարեւոր բաներ էին ինծի համար։ Ես կուզէի—լա՛ւ, գիտէք թէ իմ գիտնալ ուզածս ինչ էր—«Շարունակէ՛, Միքէ»։

Աչքերուն մէջ երկիւղանման արտայայտութեամբ մը ինծի նայեցաւ։

— Ես շատ լաւ եմ, Միքէս, ըսի, համբուրելով զինքը, սակայն պատմութիւնը տխուր է։ Աշոտ ի՞նչ եղաւ իր եղբայրը սպաննելէն վերջ...

— Աստուա՜ծ գթաց իրեն, ըսաւ Միքէ պատկառանքով՝ իր սեւորակ աչքերը լայն բանալով։ Սակայն Դէֆիս պէտք է գեղեցիկ չէրքէզուհիին մասին ալ անդրադառնայ. ինչպէս և այն վեհանձն երիտասարդ եղբօր...

— Շա՛տ տխուր է Միքէ ընդմիջեցի, բայց...

Բայց այս անգամ էն չընդհատեց իր խօսքը—«Այն եղբօր՝ որ սպաննեց ինք։ Ան սպաննեց զայն. ըստ պատմութեան արեւելեան կողմնամասը, խոշոր սրահի մը մէջ։

— Ո՞ւր, հարցուցի շնչասպառ։

— Դէֆիս երբէք տեսած չէ այդ տեղը, ըսաւ Միքէ անխռով։ Այդ սենեակը կը կարծուի որ արեւելեան կողմի աւերակներուն մէջ տեղ մ'է, որ շա՜տ, շա՜տ երկար ժամանակէ ի վեր թողուած է քայքայուիլ, որովհետեւ ոչ ոք կը փափաքէր բնակիլ հոն։

— Ո՜հ, Միքէ, ի՜նչ սոսկալի բան, ըսի մեղմաձայն. ես գացի հոն։

— Աստուա՜ծ իմ դոչեց Միքէն։ Ու դժբաղդ իշխանին մարմինը երբե՛ք չը գտնուեցաւ...

Անհուելի նախազգացումով մը սարսռացի մի քիչ. գործողութիւնս պէտք էր կանգ առնէր հոն հիմա։

— Իշխանի մարմինը երբե՛ք չը գտնուեցա՜ւ... ի՞նչ եղաւ։

— Գիշեր մը դեւերը տարին զանի, որոնց ծախեց և ինքզինքը անգութ թագաւորը կրած պատմութիւնը։

— Որքա՜ն սարսափելի է, Բայց անգութ թագաւորը ի՞նչ եղաւ։

— Աստուած գթաց իրեն կրկնեց էն պատկառանքով. միեւնոյն լայնաբաց աչքերով Մարդասպան Աշոտին, ինչպէս որ ժողովուրդը կը կոչէր զայն, ապաշխարանքները ընդունուեցան, իր աղօթքները լսուեցան. տասը տարի վերջը, ձեռքը խաչելութեան պատկեր մը բռնած՝ առջեւ մեռած գտնուեցաւ, վանքի մը մէջ, որ ինք շինել տուած էր։

— Վանքի մը մէջ որ ինք շինել տուած էր, կրկնեցի մեղմ ձայնով մը։

Միքէի դէմքը պայծառացաւ։ Խորապէս յուսահատական շեշտով մը ըսաւ.—«Այո՛, Միքէն կը հասկնայ հիմա, Միքէն այդ պահուն մտազբաղ էր. յոգնած էր. Միքէն տխմար էր։ Այո՛, Դէֆիս այն քու հարցուցած վանքդ էր։

Սիրտս արագօրէն կը բաբախէր, սակայն հարցաքննութեան կարգը ինծի եկաւ հիմա։

— Եւ Դէֆիս կուզէ՞ այդ վանքի մասին տեղեկանալ։

— Այո՛, ըսի մեղմիւ։

(Շարունակելի)

այն կէտն է որ գործաւորներէն կը խնդրուի ռուս զինուորներու վրայ հրացան չը պարպեն ընդհարումներու ատեն, ի բաց առեալ այն պարագային երբ գործաւորները ստիպուած են ինքզինքնին պաշտպանել, որովհետեւ զինուորներն ալ սեղմուած են կառավարութեան բռնութեան տակ»։

Այդ կոչը վերջացած է հետեւեալ տողերով՝ «Կեցցէ՛ զինուորներու, գործաւորներու և գիւղացիներու եղբայրութիւնը, և կը կրէ «Ռուս սոսիալ դեմոկրատ զինուորներ» ստորագրութիւնը։

«Լը Քուրիէ Էօրօբ»

ՄԱՆԻՖԵՍՏԻՆ ԿՈՐԶՈՒՄԸ

—)o(—

Լը Քուրիէ Էօրօբ. ահա թէ ինչ կերպով կը բացատրէ Մանիֆեստին մէջ տեղ գալը։

«Քանի մը օրուան մէջ տնտեսական կացութիւնը, արդէն խախտուած կործանարար պատերազմէն, անթիւ գործադուլներէն և ամբողջ շրջաններու աւերումէն յանկարծ չափազանց կը ծանրանար։

Երկրին ամբողջ կեանքը դադրելու սպառնալիքը կար։ Տագնապին այս ատեն ծանրութեան առջեւ միայն զիջանիլ կը մնար։ Պ. Վիթթէ որ այս օրերուս մէջ մեծ դեր խաղաց սուր վիճաբանութիւն մը կունենայ կիսաքաղաքական և կիսատինաստիքական խորհրդի մը մէջ, շտապով կազմած ի Բեթերհօվ, յաղթանակելով սահմանադրական պահանջներու մէջ։

Քանի մը ժամուան մաքառում տեղի կունենայ Վիթէի, քանի մը նախարարներու և յետադիմական ներկայացուցիչներ՝ կոմս Իգնաթիեվի, Աչինսքիի. Սարումերի և երկու մեծ իշխաններու միջև, որոնք դեռ հանրային պաշտօններէ հրաժարած չեն։

Յետադիմականները կը պահանջէին ուժի դիմել առանց գիտնալու թէ զօրքին ինչ մասի վրայ կրնան վստահիլ։ Այրի կայսրուհին վերջնապէս սարսափած պատահարներէն իր ազդեցութիւնը գործ կը դնէ ազատական ուղղութեամբ և անոր շնորհիւ է որ ցարը զիջած է։

Այս երկու տօքիւմանները որոնք ցարէն կորզուեցան խռովութիւններով, գործադուլներով և սարսափով, բնական է որ կասկածելի պիտի երեւին։ Ցարը և իր շրջապատողները երբեք զգացած չեն ժողովրդին, որ հիմա Ռուսիան կը կազմէ, ոչ պէտքերը և ոչ ալ ներշնչումները»։

—o—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

«Պէրլ. Լօքալ Անզէյգ.» թերթի Բարիզեան թղթակիցը կը հեռագրէ թէ ֆրանսական միջերկրական նաւատորմիղէն երկու զրահաւորներ կը պատրաստուին մասնակցելու պետութեանց Թուրքիոյ դէմ ընելիք նաւացոյցին, եթէ պէտք ըլլայ։ Ֆրանսական արտաքին գործոց նախարարութիւնը այս շաբաթ վճռողական տեղեկութիւններ կսպասէ Պերլինէն, Բեթերսպուրկէն, Լոնտոնէն և Վիէննայէն, ուրկէ պիտի կարգադրուին պատերազմական նաւերուն իրար հանդիպման խնդիրը։ Պոլսէն եկած մասնաւոր տեղեկութեան մը համաձայն կարելի է որ Բ. Դուռը առաջարկութիւն մը ընէ ոլոն պատճառաւ և նաւացոյցը կրնայ յետաձգուիլ։

— Վիէննայէն կը հեռագրեն որ Թուրքիոյ դէմ նաւային ցոյց ընելը վերջնապէս որոշուած է։ Ցոյցը հաւաքական պիտի ըլլայ և ամեն մէկ պետութիւն երկու նաւով պիտի մասնակցի.... Այդ մասին Բարձ. Դրան տեղեկութիւն տրուած է։

— Պոլսէն Բարիզ կը հաղորդեն որ Թուրքիոյ և Անգլիոյ յարաբերութիւնները խիստ լարուած են առաջինին Այտընի եւ կաթուղիէն գծին շարունակելու արտօնութեան մերժման պատճառով։

— Պոլսէն հոկտեմբեր 26 ին կը հեռագրեն հետեւեալը—Ռուսիոյ արիւնոտ դէպքերը թուրքերու վրայ այնպիսի տպաւորութիւն կը գործեն որուն հետեւանքը կրնայ վտանգաւոր ըլլալ։

— Նոյն տեղէն կը հեռագրեն. Բ. Դուռը կը շարունակէ Անգլիան միւս պետութիւններէն զատելու փորձեր ընել՝ նաւային ցոյցը խանգարելու նպատակով, խոստանալով գոհացում տալ Անգլիական նօթային պահանջներուն, սակայն Անգլիա կը մերժէ եռանդով, ինքն է որ ամենէն հաստատուն կերպով ծովային ցոյց կը պահանջէ։

Անգլիական դեսպանատունը կը պահանջէ իր հպատակներէն վերցնել թղթադրօշմներու յաւելումը որ հիմնուած է տէտ Պրիպլիքէն։

ՌՈՒՍԻԱ

Հեռագիրները կը հաղորդեն որ բոլոր մեծ քաղաքներու մէջ սարսափելի հալածանք սկսուած է հրէաներու դէմ. ոստիկանութիւնը ամբոխը կը գրգռէ և ինքն ալ կօգնէ. հրէաները կոտորուեր են Քէև, Ռոստով, մանաւանդ Օտեսսա. Օտեսսայի մէջ մօտ չորս հազար հրէա սպաննուած է, 12000 վիրաւորուած. «Սեւ Հրոսախմբեր» կոչուածները չեն խնայեր և ռուսները։ Օտէսսայի մէջ հրէաներու կրած վնասները 25 միլիոն ֆրանքի կը հասնի։ Օտէսսան պատերազմի ատեն աւերուած քաղաքի նմանութիւն ունի։ Ամբողջ փողոցներ աւերակներու վերածուած են. Տոմսկ քաղաքի մէջ, զօրքը և յեղափոխութեան հակառակող ամբոխը 800 հոգի յեղափոխականի մէկ շինութեան մը մէջ շրջապատելով ողջ ողջ այրեր է։ Օտեսսա, Մոսկուա, Կիև և Բեթերսպուրկ Սեւ Հրոսախմբերը ոստիկանութեան աջակցութեամբ գազանաբար կը հալածեն ուսանողները և ձեռք ընկածները կը մորթեն, այն ինչ որ այսօր Ռուսիոյ մէջ կը կատարուի այնքան սարսափելի, քստմնելի է որ նկարագրել անկարագրելի է։

— «Տէյլի Թելէկրաֆ»ի կը հաղորդեն բարենորոգչական գործունէութիւնը Բեթերսպուրկի մէջ կը շարունակուի անընդհատ։ Վիթէ շարունական հեռագրական և գրաւոր հրամաններ թելադրել է խաղոտցերէ։ Ֆինլանտիոյ մասին տուած ազատական մանիֆեստն ալ Վիթէի շնորհիւ է Վերջին, ցարին մանրամասն յիշատակագիր մը տուեր է որուն մէջ ապացուցեր է թէ Ֆինլանտիոյ դրութիւնը պիտի բարւոքուի միայն երբ ան իր նախկին ազատ վիճակը ընդունի։ Եւ ցարը համաձայնած է։ Վիթէ չէ կրցած դեռ իր նախարարութեան ցանկը կազմել որովհետեւ իրեն պէտքի մարդիկը երկաթուղիներու չը գործելուն պատճառով չեն կրնար մայրաքաղաք գալ։

— Բեթրօբավլօվսքի բանտերէն ազատ արձակուած են մի չորս տիկիններ. մինչդեռ բանտը լիքն է քաղաքական յանցաւորներով։ Կը հաղորդեն որ Թրէբով 140 հոգի բանտարկեալներ չէ արձակած, թէև անոնք ալ կը գտնուին ներուածներուն շարքին մէջ։ Նշանաւոր փաստաբաններ ընկերութիւն մը հիմնած են այդ խնդրին լուծումը պահանջելու համար։ Ուրիշ յանձնախումբ մը խնամոտ խուզարկութիւն մը կընէ հասկնալու համար այն սպաներուն անունները որոնք վերջին օրերս զօրքերուն հրամայած են ժողովրդին վրայ հրացան պարպել։ Ժողովուրդը և մամուլը սկսած է կասկածով վերաբերիլ կառավարական յայտնութիւններուն, որովհետեւ կը տեսնայ որ ոստիկան սպաները «Սեւ Հրոսախմբերը» կը զինեն և կը գրգռեն կրթուած դասակարգին դէմ։

— Ներքին գործոց նախարար Պուլիկին արդէն հրաժարական տուած է և հրաժարականը ընդունուած է։

— Դահլիճի խնդիրը որոշուած է. Վիթէ պէտք է ըլլայ նախարարապետ, առանց մասնաւոր նախարարական պաշտօն ստանձնելու որպէսզի կարենայ եւ կրին ընդհանուր վարչութեան վրայ հսկել։

Կրթական նախարարը պիտի ըլլայ իշխան Եվգենիյ Թրուպեցքոյ, Քիէվի համալսարանի բրոֆէսոր։

— Ցարին երկու մանիֆեստները Ֆինլանտիոյ մայրաքաղաքին մէջ մեծ հրճուանքով ընդունուեր են։ Գործադուլը դադրեր է և սովորական կեանքը սկսուած է։

Ընդհանուր նահանգապետը և իր օգնականը մեկներ են Բեթերսպուրկ։ Ցարին մանիֆեստները գոհացում կուտան Ֆինլանտիոյ յեղափոխականներու պահանջներուն որոնք իրենք պատգամաւորութեան միջոցով հաղորդած էին Բեթերսպուրկ։

— Վիթէ կը մշակէ մամուլի և խօսքի լիակատար ազատութեան օրինագիծը. նոր օրէնքով պիտի հալածուին միայն վեհապետը, դաւանութիւնները վիրաւորող և ապստամբութեան գրգռող յօդուածները, ինչպէս ամեն սահմանադրական երկրի մէջ։ Կը մշակէ նաև ընտրողական օրէնքը որուն շնորհիւ ժողովրդին մեծ մասը պիտի մասնակցի ընտրութեանց։ Տումային մէջ գործաւոր դասակարգը ներկայացուցիչներ պիտի ունենայ այն ձեւով ինչ որ Աւստրիայի երեսփոխանական ժողովին մէջ է։

ԳԱՐԱՏԱՂ

Իշխան Նիքօլան իր ժողովրդին սահմանադրութիւն պարգեւեր է. երեսփոխանական ժողովին ընտրութիւնը տեղի պիտի ունենայ դեկտ. 6ին Ս. Նիքօլայի տօնին օրը։

ԱՒՍՏՐԻԱ

Ընդհանուր ձայնատուութեան իրաւունք ստանալու համար եղած շարժումները մեծ չափեր կառնեն և արիւնալի կը դառնան, յուզումները սաստիկ են մանաւանդ Չեխիայի մէջ։

Печатница на П. Глушковъ и С-ие, Варн